ՎԵՀԱՐԱՆՈՒՄ



Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ, ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ (18 փետրվար 1982 թ.)

Հրաշալի երևույթ է, որ հայ ժողովուրդը հազար և հինգ հարյուր տարիներ շարունակ, սրբությամբ պահպանել է հիշատակը Վարդանանց հերոսամարտի, իր փոթորկահույզ պատմության ողջ ընթացքում, իսկ Հայ Եկեղեցին իբրև հարազատ արտահայտիչը իր ժողովրդի ազգային զգացումների, նվիրագործել է այդ հերոսամարտը՝ սրբացնելով «Վասն հաւատոց և վասն հայրենեաց» նահատակված հերոսներին: Այս երևույթը հավանաբար եզակի է ժողովուրդների պատմության հորիզոնի վրա: Հիրավի, բազմաթիվ ազգեր անցյալում ունեցել են Վարդանանց հերոսամարտի նման պատերազմներ, շատ անգամ հաղթական արդյունքներով, սակայն Մենք գոնե, չենք հիշում մի նման պատերազմ, որի հիշատակը սրբացված լինի Եկեղեցու կողմից և դարեր շարունակ անընդմեջ մինչև այսօր ամեն տարի նույն ոգեշընչանքով տոնախմբված լինի այն, ինչպես հայերս ենք անում Վարդանանց պատերազմի հիշատակը ոգեկոչելիս, մի պատերազմ, որ, ինչպես գիտենք, ո՛չ թե հաղթանակով, այլ նահատակությամբ ավարտվեց:

Ինչպե՞ս բացատրել՝ առաջին ակնարկին անտրամաբանական թվացող այս իրողությունը:

Ես հակված եմ այն վերագրելու երեք պատճառների, երեք տվյալների:

Առաջին՝ որ Վարդանանք, Ավարայր իջան իրենց կրոնական հավատքը պաշտպանելու, պատրաստ զոհվելու վասն Հիսուսի, այն պայծառ գիտակցությամբ, թե իմանալի մահով պիտի ժառանգեն երկնքի արքայությունը: Սխալ չի լինի մտածել, թե նրանք նույնիսկ հոգեպես ավելի երջանիկ եղան, իրենց երկրային կյանքը զոհելու, ի խնդիր հավիտենական կյանքի անանց փառքին: Ժամանակակից պատմիչ Եղիշե վարդապետ վկայում է, թե Վարդանանց մարտիկների համար՝ կյանքը Քրիստոս էր և մեռանիլը շահ (Ա Փիլիպ. 21):

«Վարդանանց» նահատակների սրբացումը և նրանց հիշատակի հան-

դեպ պաշտամունքը դարեր շարունակ, ապացույց է, որ հայ ժողովուրդը գիտակցաբար թե ենթագիտակցաբար Վարդանի և իր քաջերի նահատակությունը ըմբռնել է ժամանակի և տեղի պայմանավորումներից վեր՝ իբրև մի ոգեկան մնայուն երևույթ, Եկեղեցու և ազգի կյանքի մեջ մշտապես ներկա մի հոգևոր դողանջ, մշտապես գործող ներշնչանքի աղբյուր: Գտնվում ենք՝ պատմական մի դեպքի ոգեղինացման երևույթի առաջ:

Երկրորդ տվյալը, որ մտածում եմ նկատել իբրև պատճառ «Վարդանանց» հիշատակի անթառամության, դա Հայոց երկրի քաղաքական անկախության ժամանակաշրջանների կարճատև լինելն է եղել մինչև տասնևմեկերորդ դարը, և ապա իսպառ քայքայումը հայ պետականության, եթե չհաշվենք պատմական Հայաստանից հեռու՝ Կիլիկյան հողամասի վրա նույնպես կարճատև պետականության շրջանը: Այսպիսով երկար դարեր շարունակ օտար լծերի տակ տվայտող և աշխարհից աշխարհ թափառական դարձած հայերը, Վարդանանց հերոսամարտը վերածել են ազգային հոգևոր անկախության վահանի, կառչելով նրան իբրև փրկության գաղափարական լաստի:

Եվ պատահական չէ, որ Վարդանանց հիշատակին նվիրված շարականը «Նորահրաշ»-ը հորինել է Ս. Ներսես Շնորհալին տասներկրորդ դարում, այսինքն պատմական Հայաստանի պետականության անկումից ոչ շատ ժամանակ անց:

Եթե մեր ժողովուրդը առավել բախտավոր պատմություն ունենար և իր պետական կյանքը կարողանար շարունակել մինչև նոր ժամանակները, հավանական է, որ Վարդանանց հերոսամարտը իր նույն մշտապես այժմեական նշանակությունը չպահեր, ազգային հայրենասիրական տեսակետից:

Երրորդ հիմքը Ավարայրի խորհրդի, մեր ժողովրդի անմար հավատքն է եղել, որ Վարդանանց հիշատակը մի օր կդառնա այն հզոր ոգեկան ուժը, որ կբացի հայոց ազգի հուսո դռները: Այս ճշմարտությունը հաստատելու համար բավական է հիշատակել հայ հոգևորականության աղոթքներն ու քարոզները և հայ զորականների մարտակոչերը Սարդարապատի հերոսամարտի նախօրյակին և հայրենական վերջին պատերազմի ընթացքին, հասկանալու համար մեր ժողովրդի հոգու և սրտի խորքում խարսխված Վարդանանց կախարդիչ հոգեկան զորությունը:

Անհա այս հիմքերի վրա է, որ Ավարայրի հերոսները մշտապես մնացել են ներկա՛, մեր ժողովրդի պատմության հորիզոնի վրա, մնում են ներկա՛ նաև մեր օրերին, հայրենական վերածնունդի այս դարաշրջանում՝ իբրև ոգի, իբրև պատգամ, իբրև ներշնչանքի աղբյուր, թեև հազար և հինգ հարյուր տարիներ հետո, մեր ժողովրդի, ինչպես աշխարհի ժողովուրդների կյանքի պայմաններն ու հեռանկարները բոլորովին այլ են:

Շատ բնական է, որ Վարդանանց հայրենասիրությունը տասնհինգ դարեր առաջ, տարբեր գաղափարական տարազ ունենար և տարբեր դրսևորումներով արտահայտվեր: Մեր օրերի հայրենասիրությունը նույնպես շատ բնական է, որ տարբեր տարազ ունենա և տարբեր ձևերով դրսևորվի: Այդ է պարագան նաև այլ պատմական ժողովուրդների: Եթե հրաշքով այսօր հանդիպեին Ավարայրի, Սարդարապատի և Կերչի հայ զինվորները, հավանական է, որ իրար չհասկանային, թեև բոլորն էլ նույն հայրենիքի համար էին կռվել ու զոհվել:

Պատկերացրեք ֆրանսիացի կռվող զինվորը Լյուդովիկոս ԺԴ-ի օրով 1675-ական թվականներին Հոլանդիայի դեմ, ապա 1796-ին Վալմիի ճա-

կատամարտում և հետո 1940—44 թվականներին Համաշխարհային Բ պատերազմի ընթացքում դիմադրական մարտերում: Նրանք ևս, եթե այսօր իրար հանդիպեին, դժվար թե գաղափարապես իրար ճանաչեին ու իրար հասկանային: Մենք երբեմն սխալվում ենք մեր դատողությունների մեջ՝ անցյալը ճշմարտորեն հասկանալու, որովհետև մեր ներկա գաղափարներն ու զգացումները վերագրում ենք անցյալի մեր ազգակիցներին:

Հայրենասիրությունը միայն վերացական, իդեալական գաղափար չէ անշուշտ, այլ մանավանդ տվյալ մի ժամանակահատվածում, տվյալ աշխարհագրական-քաղաքական պայմաններում ձևավորվող ու դրսևորվող մի գիտակցված ապրում, մի ջերմ կամեցողություն, ի խնդիր հայրենի ժառանգության անվտանգ ու ազատ պահպանման ու այդ ապրումից և կամեցողությունից ծնունդ առած հոգեկան մղում՝ դեպի աշխատանք, դեպի հայրենաշեն իրագործում, դեպի ստեղծագործ խոյանք, դեպի վերելք ու ծաղկում:

Հայրենական վերածննդի մեր օրերին, ազգային վերածննդի արդի իրականության լույսի տակ, Վարդանանց հիշատակը հարգել ու տոնախմբել, մնալ հավատարիմ նրանց ոգուն ու պատգամին, նշանակում է՝ մեր աշխատանքով, մեր շինարար իրագործումներով, մեր մտքի ու կամեցողության դրսևորումներով, ավելի ու ավելի զորացնել, ամրապնդել արդի հայ պետականության հիմքերը, ավելի ու ավելի համախմբել հայ ժողովրդի զավակները ազատագրված մեր երկրի հողամասի վրա, ավելի ու ավելի ծաղկեցնել մեր ազգային մշակույթը:

Ով ճշմարտապես կամենում է հարազատ մնալ Վարդանանց սուրբ հիշատակին, նրան անհրաժեշտորեն հարազատ կլինի արդի իրական Հայաստանը, արդի ապրող ու շնչող, աճող ու ծաղկող մեր մայր հայրենիքը, ապահով ու խաղաղ պայմաններում անդադրուն կերպով վերակառուցվող մեր երկիրը, փայլուն ստեղծագործությունների բարձունքներին հասնող հայրենաբնակ մեր ժողովուրդը, իր ազգային պետության դրոշի ներքև, եղբայրական ազգությունների մեծ ընտանիքում, որի կազմավորման վաթսուն տարիները լրանում են մեր օրերին:

Վարդանանց և հետագա սերունդների հայրենասիրական ոգին, ուղիղ գծով հասել է մինչև մեր օրերը և ընթանալու է անտարակույս նույն ուղիղ գծով դեպի ապագան, անցնելով արդի Հայաստանի ճանապարհով, այո՛ հաճախ նույնիսկ իրարամերժ գաղափարախոսությունների և իրադարձությունների դիալեկտիկ զարգացման ուղիով: Ավարայրի, Սարդարապատի և Կերչի հայ մարտիկները մահու կենաց կռիվ մղեցին տարբեր գաղափարական տարազ հագած, տարբեր կարգախոսներով, տարբեր ընկերային-քաղաքական պայմաններում, տարբեր արտաքին թշնամիների դեմ, սակայն նրանք զոհվեցին միևնույն հավերժական Հայաստանի համար:

Չի առանց ներկան դրապես և ստեղծագործ կերպով ապրելու հայրենի հողի վրա, առանց ներկան անվտանգ ու ապահով պահպանելու, առանց այդ ներկան արդիական տարազով արժեվորելու, կիզվի կապը, կքանդվի կամուրջը անցյալի ու ապագայի միջև: Հայ ազգի ապագան բուն կերտողները արդի Հայաստանի հայրենաշեն կառուցողներն են, իրենց բազուկներով մուրճ ու մանգաղով չարքաշ աշխատավորներն են, գիտության ու մշակույթի ստեղծագործ մշակներն են :

Հույժ միտիթարական է Մեզ համար, որ արտաքսմանում բնակվող հայ ազգի զավակները ևս, Վարդանանց հերոսների նկատմամբ իրենց հարգանքն ու պաշտամունքն են արտահայտում սիրով ու հոգատար վերաբերու-

մով և գործնապես սատար հանդիսանալով մեր օրերի Հայաստանի հառաջընթացքին և ծաղկմանը: Չի արտերկրի մեր զավակներին բոլորին անխտիր Մենք նկատում ենք անբաժանելի հարազատ մասը մեր հայրենի ժողովրդի մայր զանգվածի:

Մանավանդ այստեղ հայրենի հողի վրա, կենդանի է այսօր ոգին Վարդան Մամիկոնյանների, այստեղ հայրենի հողի վրա տարվե տարի, օրեց օր ամրապնդվում են հիմքերը մեր ազգային պետականության, այստեղ հայրենի հողի վրա ծաղկում են մեր ազգային մշակույթի նոր արժեքները, այստեղ հայրենի հողի վրա դարբնվում է մեր ազգի ապագան, ամենայն հայոց հայրենիքի ապագան:

Ու մենք տակավին հավատում ենք, որ միայն ա՛յս ճանապարհով հնարավոր կդառնա նաև կենսագործումը մեր ազգային բոլոր արդար երազանքների:

Փա՜ռք և օրհնությո՜ւն Ավարայրի հերոսներին:

Փա՜ռք և օրհնությո՜ւն հավերժական Հայաստանին: